



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< ----->> << ----->> 2019թ.

N -----

<<Հետաքննող լրագրողներ>> հասարակական կազմակերպության

<<Հետք>> թերթի լրագրող Գրիգոր Բալասանյանին

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետին ուղղված Ձեր 2019 թվականի մայիսի 24-ի գրությամբ բարձրացված հարցերի տեղեկացնում ենք, որ՝

1. 2019 թ. առաջին եռամսյակի համար մարզպետարանի աշխատակիցներին վճարվել է 17646102 ՀՀ դրամ պարգևավճար:
2. Մարզպետարանի 129 միավոր հաստիքից փաստացի զբաղեցված է 119 հաստիքային միավորը, որից 101 աշխատակից ստացել են պարգևավճար:
3. Պարգևավճարներ ստացել են 2019 թվականի առաջին եռամսյակում ստացված հանձնարարականները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարած աշխատակիցները՝ անմիջական ղեկավարների ներկայացմամբ:
4. Պարգևավճար չեն ստացել մարզպետարանի նորանշանակ, ինչպես նաև սույն գրության 3-րդ կետի պահանջներին չբավարարող աշխատակիցները:
5. 2019 թ. առաջին եռամսյակում պարգևավճարների չափի վերաբերյալ տեղեկությունը տեղադրված է ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական (armavir.mtad.am) կայքի <<Իրավական ակտեր>> բաժնի <<Մարզպետի որոշումներ>> ենթաբաժնում: Իսկ ՀՀ Արմավիրի մարզպետը, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալը և ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարը պարգևավճարներ չեն ստացել:

ՄԱՐԶՊԵՏԻ

ՏԵՂԱԿԱԼ՝

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 05.06.2019 11:13:00 GMT+4

Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

Կատ.՝ Վ.Մկրտչյան

Հեռ.՝ 0237/ 2-24-12